ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶ
ԳՅՈՒՂ ՊՏՂՈՒՆՔ
Հ/Հ 900322235038
ՀՎՀՀ –04701766
ԻՆԴԵՔՍ 1145

ՀԵՌԱԽՈՍ 02316-35-50

РА АРМАВИРСКАЯ
ГУБЕРНЯ СЕЛО ПТГУНК
ИНДЕКС 1145
ТЕЛ.0231 6-35-50
RA THE MARZ OF ARMAVIR
VILLAGE PTGHUNK
INDEX 1145

թիվ 01-97 04.10 2012թ.

ՀՀ Արմավիրի մարզպետ
պարոն՝ Ա.Ղահրամանյանին

Հարգարժան պարոն Ղահրամանյան

Ձեզ եմ ներկայացնում 2012 թվականի սեպտեմբեր ամսվա ընթացքում Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի ընդունած որոշումները և արձակած կարգադրությունները:

Առդիր 4 էջ:

Պտղունք համայնքի ղեկավարի ժ/պ՝ /Է.Արաքյան/

ՀՀ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
Մուտք թիվ 8690-12
05 10 2012թ.

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«05» Սեպտեմբեր 2012 թվականի N 30

## ՏՆԱՄԵՐՁ ՀՈՂԱՄԱՍԻ ՀԱՍՑԵԻ ՎԵՐԱՆՎԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 32-րդ հոդվածի 17-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 12-ի «Հայաստանի Հանրաետության քաղաքային և գյուղական բնակավայրերում ներբնակավայրային աշխարհագրական օբյեկտների անվանափոխման, անշարժ գույքի՝ ըստ դրանց գտնվելու և (կամ) տեղակայման վայրի համարակալման, հասցեավորման ու հասցեների պետական գրանցման կարգը հաստատելու և հասցեների գրանցման լիազոր մարմին սահմանելու մասին» N2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 48-րդ կետով և հիմք ընդունելով համայնքի ավագանու 2006 թվականի սեպտեմբերի 7-ի «Համայնքային նշանակության փողոցների վերանվանման մասին» թիվ 1 որոշումը.

Որոշում եմ՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի սեփականատեր՝ Կարինե Մարտունիկի Մելքոնյանին պատկանող տնամերձ հողամասին (ծածկագիր 008-004) տալ հասցե՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի Այգեստան փողոց թիվ 5 տնամերձ հողամաս:

2.Սույն որոշումը ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստր պետական կոմիտեի տարածքային ստորաբաժանում՝ պետական գրանցման համար:

3.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Մ.ՁԵՅՆԱԼՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետություն Արմավիրի մարզի
Պտղունք համայնք, 0231-6-35-50, ptghunk 1@mail.ru

# ՈՐՈՇՈՒՄ

«14» Սեպտեմբեր 2012 թվականի N 31

## ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՎԱՅՐ ԴՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական Ինքնակառավարման մասին » Հայաստանի Հանրապետության օրենքի 28-րդ հոդվածի 3-րդ մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության թիվ 19 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2012 թվականի սեպտեմբերի 14-ի №160-Ա որոշումը.

Որոշում եմ՝

1.2012 թվականի սեպտեմբերի 14-ից վայր դնել Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի տեղակալ Էդիկ Արմենի Արաքյանի լիազորությունները:

2.Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ս.ՋԵՅՆԱԼՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» Սեպտեմբեր 2012թ. թիվ 13

## ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 32-րդ հոդվածի առաջին մասի 17-րդ կետով, Արմավիրի մարզի Պտղունքի գյուղապետարանում ընդունում – հանձնում իրականացնելու նպատակով .

Կարգադրում եմ՝

1. Ստեղծել հանձնաժողով՝ համաձայն հավելվածի
2. Հանձնաժողովին (Հ.Հարությունյան)՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել համայնքի ավագանու անդամներ՝ Արամ Արթենյանին և Ալիկ Հովհաննիսյանին (համաձայնությամբ)
3. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավարի
ժամանակավոր պաշտոնակատար՝ /Է.Արաքյան/

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«15» Սեպտեմբեր 2012թ. թիվ 11

### ԷԴԻԿ ԱՐՄԵՆԻ ԱՐԱՔՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 94-րդ հոդվածի 2-րդ կետով և հիմք ընդունելով էդիկ Արմենի Արաքյանի դիմումը.

Կարգադրում եմ՝

1. Էդիկ Արմենի Արաքյանին նշանակել Արմավիրի մարզի Պտղունք համայնքի ղեկավարի տեղակալ, կնքելով նրա հետ անորոշ ժամկետով աշխատանքային պայմանագիր, համաձայն հավելվածի:
2. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս. Զեյնալյան/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՊՏՂՈՒՆՔ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

«24» Սեպտեմբեր 2012թ. — թիվ 12

## ՍԱՄՎԵԼ ՍԱՄՍՈՆԻ ՁԵՅՆԱԼՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 176-րդ հոդվածի 3-րդ մասով.

Կարգադրում եմ՝

1. 2012 թվականի սեպտեմբեր 24-ից Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Պտղունք գյուղական համայնքի ղեկավար Սամվել Սամսոնի Ձեյնալյանին տրամադրել չվճարվող արձակուրդ 60 օր տևողությամբ:
2. Համայնքի ղեկավարի բացակայության ժամանակ լիազորությունների կատարումը վերապահել համայնքի ղեկավարի տեղակալ՝ Էդիկ Արմենի Արաքյանին:
3. Աշխատակազմի առաջատար մասնագետին (Հ.Հարությունյան) սահմանված կարգով իրականացնել աշխատավարձի վճարումը:
4. Սույն կարգադրությունը ուժի մեջ է մտնում արձակման պահից:

Պտղունք համայնքի ղեկավար՝ /Ս. Ձեյնալյան/